[illegible]

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, ներկայացնելով ուսուցիչների մասնագիտական զարգացման նոր սխեման, նշեց, որ այն նախատեսում է ուսուցիչների բազմակողմանի նախապատրաստություն: Սխեմայում արտացոլվել է համալսարանական ծրագիրը, որն ուղղված է մասնագիտական որակավորման բարձրացմանն ու պաշտոնավարման առաջընթացին:
«Սխեմայի հիման վրա մշակվել է ուսուցիչների մասնագիտական նախապատրաստման բարձրագույն կրթության ծրագիրը: Մինչ օրս, գոյություն չուներ մանկավարժների նախապատրաստման եւ գնահատման հետեւողական միասնական համակարգ: Իսկ նոր համակարգը շահագրգռում է երիտասարդներին ոչ միայն մանկավարժությամբ զբաղվել, այլեւ ծառայում է մանկավարժի հեղինակության բարձրացմանը: Պետությունը պատրաստ է ֆինանսական որոշակի ռեսուրսներ ներդնել մանկավարժների նոր կադրերի նախապատրաստման գործում»,- հայտարարեց կրթության նախարարը:
Սխեմայի շրջանակներում բավականին գործառույթներ են փոխանցվում դպրոցներին, ինչը արտահայտվելու է կրթօջախների ինքնավարության մակարդակի բարձրացման մեջ:
Թամար Սանիկիձեի խոսքերով, հաշվի առնելով սխեմայի մասշտաբայնությունը, 2015-2016 թվականներին այն կկիրարկվի պիլոտային պայմանակարգով: Թեպետ այդ ընթացքում ուսուցիչների ձեռքբերումները կպահպանվեն, եւ դրանք ազդեցություն կգործեն նրանց պաշտոնական առաջադիմության վրա:
Նախարարի հավաստմամբ, նոր սխեմայի ներդնումը հնարավորություն կտա բարձրացնել կրթօջախներում դասավանդման մակարդակը, երկիրը կստանա առավել նախապատրաստված մանկավարժական կադրեր:

[illegible]